ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/82

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի ղեկավար

Ա. Մխիթարյանի (04.06.2019թ. թիվ 22-Ա որոշում),

քննելով Շիրակի մարզի Սպանդարյան համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար արևային ֆոտովոլտային /30կվտ/ համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ 20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Գրին Օպշոն» ՍՊԸ-ի կողմից 24.08.2020թ. ներկայացված (25.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/82 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Գրին Օպշոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գրին Օպշոն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 24.08.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Սպանդարյանի համայնքապետարանի կողմից հայտարարվել է ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի արևային ֆոտովոլտային /30կվտ/ համակարգի կառուցման աշխատանքների ձեռք բերման նպատակով թիվ «ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ 20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գրին Օպշոն» ՍՊԸ և «Փրայմ փրոջեկտ» ՍՊԸ համատեղ գործունեությունը:

Հայտերի բացումը տեղի է ունեցել 11.08.2020թ.-ին՝ փաստաթղթային եղանակով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 5 մասնակից:

1. «Պրոֆպանել» ՍՊԸ,
2. «ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ,
3. «Սոլարա» ՍՊԸ,
4. «Ռենյուաբլ քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ,
5. «Գրին Օպշոն» ՍՊԸ և «Փրայմ փրոջեկտ» ՍՊԸ համատեղ գործունեություն:

Հայտերի բացման նիստին «Գրին Օպշոն» ՍՊԸ և «Փրայմ փրոջեկտ» ՍՊԸ համատեղ գործունեության լիազորված ներկայացուցչի ներկայությամբ բացվել են մասնակիցների ծրարները և արձանագրվել, որ ծրարներում առկա փաստաթղթերը բավարարում են հրավերով սահմանված պահանջներին, և բանավոր կերպով հայտարարվել է հայտերի կազմման և ներկայացման համապատասխանության մասին: Միաժամանակ հայտարարվել է, որ «Պրոֆպանել» ՍՊԸ-ի գնային առաջարկը նվազագույն գնային առաջարկն է:

Այնուհետև «Գրին Օպշոն» ՍՊԸ և «Փրայմ փրոջեկտ» ՍՊԸ համատեղ գործունեության լիազորված ներկայացուցչի հարցին, թե արդյո՞ք հաղթող մասնակիցը մրցույթին մասնակցելու հայտի ապահովում ներկայացրել է, մրցույթի քարտուղարը հայտարարել է, որ մրցույթին մասնակցության հայտի ապահովում ներկայացրել է ընդամենը 2 մասնակից, միաժամանակ տեղեկացրել, որ սույն հրավերով Պատվիրատուի կողմից հայտի ապահովում ներկայացնելու պահանջ չկա, քանի որ գնումը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը: Այնուհետև, ներկայացուցչի պնդմանը, որ

համաձայն հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի և 2-րդ մասի, ինչպես նաև 2.4-րդ կետով պահանջվել է հայտի ապահովումը, քարտուղարը անհասկանալի բացատրել է, որ տվյալ ապահովումը մասնակիցը պետք է ներկայացնի հաղթող մասնակից ճանաչվելուց հետո:

14.08.2020թ.-ին պաշտոնական տեղեկագրում՝ gnumner.am կայքում հրապարակվել է հայտերի բացման և գնահատման նիստի 11. 08. 2020թ. -ի թիվ 2 արձանագրությունը, որի 3-րդ կետի համաձայն բոլոր հայտերը ներկայացվել են հրավերի պահանջների համապատասխան:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եվ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի՝

8.2 կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

8.3 կետի համաձայն՝ Ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

8.7 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

8.8 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.7-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետեվյալ հանգամանքների վրա.

Նախ, Ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 11.08.2020թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրությունից պարզ է դառնում, որ հանձնաժողովի կողմից հաղթող մասնակից ճանաչված ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվել է առանց մասնակիցների կողմից Հրավերի 4.3 կետի 3-րդ ենթակետի և 2-րդ մասի, 2.4-րդ կետով պահանջվող հայտի ապահովում ներկայացնելու պահանջը հաշվի առնելու: Նշած հանգմանքերում գնահատող հանձնաժողովը, չի ղեկավարվել ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետով, հայտերի բացման և գնահատման նիստի

ժամանակ, չի կասեցրել նիստը և «Պրոֆպանել» ՍՊԸ-ին ու հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին չի ծանուցել համապատասխան շտկումներ կատարելու մասին:

Տեղեկացնում ենք նաև, որ «Գրին Օպշոն» ՍՊԸ և «Փրայմ փրոջեկտ» ՍՊԸ համատեղ գործունեությունը կողմից Գնահատող հանձնաժողովից պահանջվել էր, ներկայացնելու մասնակցների հայտով ներկայացրած փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ կան անճշտություններ նաև հայտերում առկա այլ փաստաթղթերում: Մասնավորապես, առկա էին անճշտություններ և անհամապատասխանություններ մասնակիցների կողմից ներկայացրած ծավալաթերթի հաշվարկների մեջ:

Նման փաստական հանգամանքներում ակնհայտ է, որ «ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ 20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված մի շարք դրույթներ, մասնավորապես՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 41-րդ և 42-րդ կետերի, Հրավերի 8.2-8.3, 8.6-8.8 կետերով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարատավորեցնել «ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ 20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. Դադարեցնել «Պրոֆպանել» ՍՊԸ-ին ընտրված մասանկից ճանաչելու մասին որոշումը:

2. Չկայացած հայտարարել մրցույթն ամբողջությամբ կամ վերագնահատել մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և որոշել թիվ «ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ 20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաղթողին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.09.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>Շիրակի մարզի Սպանդարյան համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Շիրակի մարզի Սպանդարյան համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.08.2020թ. թիվ 01/36 գրությամբ հայտնել է, որ ի պատասխան ԲՔԱ-ԳՆ/2/12717-2020 25.08.2020թ. գրության՝ ներկայացնում է ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան համայնքի «ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ պահանջված բոլոր նյութերը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է բողոքի քննության նպատակով 04.09.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ: Նիստին մասնակցել է Սպանդարյան համայքի ղեկավարը և խնդրել է բողոքը քննել սեղմ ժամկետում:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/82 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Շիրակի մարզի Սպանդարյան համայնքապետարանի կարիքների համար արևային ֆոտովոլտային /30կվտ/ համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ 20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Գրին Օպշոն» ՍՊԸ և «Փրայմ փրոջեկտ» ՍՊԸ կոնսորցիումը:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 կետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գրին Օպշոն» ՍՊԸ -ի 24.08.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան համայնքապետարանի 26.08.2020թ. թիվ 01/36 գրությամբ ներկայացված փաստաթղթերը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 14-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովը բացում և գնահատում է հայտերը:***

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:</u>***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ ***<u>մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված</u> մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:***

Ընթացակարգի հրավերի (հետայսու նաև՝ Հրավեր) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝

<u>7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:</u>

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

7.4 Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.1 ենթակետի 2) պարբերության համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝

ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը,

<u>բ. բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:</u>

Հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթի կամ բանկային երաշխիքի բնօրինակը:

Այսպես, Շիրակի մարզի Սպանդարյան համայնքապետարանի կարիքների համար արևային ֆոտովոլտային /30կվտ/ համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ 20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Գրին Օպշոն» ՍՊԸ և «Փրայմ փրոջեկտ» ՍՊԸ կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցների ներկայացրած ծրարում բոլոր փաստաթղթերն առկա են:

Նույն արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «Պրոֆպանել» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքաբերի և Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ Ընթացակարգի շրջանակներում հայտի ապահովում ներկայացվել է միայն «Գրին Օպշոն» ՍՊԸ և «Փրայմ փրոջեկտ» ՍՊԸ կոնսորցիումի և «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից. վերոգրյալով պայմանավորված՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, այն է՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>***, (տվյալ դեպքում մասնակիցների կողմից չեն ներկայացվել Հրավերով սահմանված հայտի ապահովումները), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ արձանագրել է, որ մասնակիցների ներկայացրած ծրարում բոլոր փաստաթղթերն առկա են:

Այսպիսով, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման փուլում պետք է Կարգի 14-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ քննության առարկա դարձներ (բացեր և գնահատեր) և Հրավերի 1-ին մասի 8.1 կետի 2) ենթակետի բ) պարբերության համաձայն՝ ստուգեր բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման

համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, այն է՝ բոլոր մասնակիցների, այդ թվում «Գրին Օպշոն» ՍՊԸ և «Փրայմ Փրոջեկտ» ՍՊԸ կոնսորցիումի, «Ռենյուաբլ Քոքասըս Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից հայտում՝ հրավերով որպես պարտադիր փաստաթուղթ նախատեսված հայտի ապահովման առկայությունը և դրա համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, ինչը գնահատող հանձնաժողովի կողմից չի արվել, և արդյունքում խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով և վերը շարադրված մյուս իրավական նորմերով սահմանված պահանջները, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «Գրին Օպշոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գրին Օպշոն» ՍՊԸ-ի կողմից 24.08.2020թ. ներկայացված բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՇՄՍՀ-ԳՀԱՇՁԲ 20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Ընդունել որոշում՝ «Պրոֆպանել» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Վերագնահատել մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**